

ԻՆՏԵՐՈՒՄ ՏԱՐԻ

ՄԱԿ

Տարեկան դիմ 10 ռուբլի կես տարեկան 6 ռուբլի

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն համարատան մէջ:

Թարգմանադարձից զերմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրատարնային բառին 2 կոպեկ:

ՄԱԿ

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. Ե. Ն.

(ՏԵՍՆԵՐՈՐԳ ՏԵՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիմումը և նոյն պրոպագանդայով ԱՄՆ-Ն ՕՐ (բացի տօն և տօնօրերէն հե-տեալ օրերից):

ՊՐՈԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներ-քին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետոն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլի, կես տարեկան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3 ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլի:

Գրվել կարելի է Խմբագրութեան մէջ հետեւեալ հասցեով. Тифлис, редакция «Мшак».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆ ԳԱՅԻՈՒԹԻՒՆ

Միացեալ ընկերութիւն.— Եւրոպայի տեսու-թիւն: Նամակ Եւրոպայի Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Թիֆլիսի քրտն-սիր: Միացեալ Պարսկաստանից.— Մը-շակի հեռագիրներ: Յայտարարութիւններ:

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կ. Պօլսի երեք ընկերութիւն-ների միանալը մեզ, ուստաստան-ցի հայերիս վառ պարտք է դը-նում աւելի էլ եռանդով օգնել թիւրքիայի հայերի կրթութեան գործին: Չը պէտք է մոռանանք որ թիւրքաց Հայաստանի մէջ լուսաւորութիւնը տարածելու գործը ապագայի համար մեծ նշանակութիւն պէտք է ունենայ: Միացեալ ընկերութիւնը բացի Հայաստանի բուն Հայ ազգա-րնակութեան մէջ ուսում տարա-ծելուց, պէտք է փոքր առ փոքր ջանայ տարածել լուսաւորութիւ-նը և թիւրքաց Հայաստանի վայրերի ցեղերի մէջ, որոնք բը-նակվելով հայերի հետ միասին, մինչև այժմ չեն ենթարկվել որ և է կրթողական ներգործու-թեան, դարերի ընթացքում մը-նացին վայրերի, բարբարոս և մինչև այժմ շարունակում են նե-ղացնել հայերին: Վերջապէս հայերը պէտք է մտածեն իրանց թշնամիներից իրանց համար բարեկամներ պատ-րաստել, և այդ նրանք կարող են անել միմիայն նրանց մէջ լու-սաւորութիւնը տարածելով: Որպէս զի մենք մեր կողմից դրական կերպով օգնենք Միա-ցեալ ընկերութեան գոյութեանը, հարկաւոր է նուիրատուութեան

գործը հիմնել ոչ թէ պատահա-կան, ժամանակաւոր հիմունք-ների վրա, այլ հաստատ, տևո-ղական սկզբունքների վրա:

Մենք առաջարկում ենք որ յօդուտ Միացեալ ընկերութեան նուիրատուութիւն անել ցանկա-ցողները, փոխանակ միանուազ գումարներ տալու, աւելի քիչ տան, բայց պարտաւորվեն մշտա-պէս տալ, տարեկան յայտնի վը-ճարը մոցնելով յօդուտ յիշեալ ըն-կերութեան: Մենք մեր կողմից ուրախութեամբ կընդունենք այդ տարեկան անդամական վճարները, և կը հասցնենք Միացեալ ըն-կերութեանը:

Ինչ որ Կ. Պօլսի մէջ հիմնված ընկերութիւնը անում է թիւր-քաց Հայաստանում, նոյն աշ-խատանքը Եւրոպայիստում կա-րող էր յանձն առնել Բագուի Մարգարիտական ընկերութիւնը կամ այն ընկերութիւնը, որ պէտք է հիմնվի թիֆլիսում:

Դամանակ է արգէն մեր ին-տելիգենցիային ծանր, լուրջ կեր-պով վերաբերվել դէպի հայերի կրթութեան գործը:

Մենք չենք քարոզում հայե-րին, ինչպէս այդ անում են ու-րիշները, թողնել անձնական հա-շիւները, թողնել կրքերը, որով-հետեւ այդ տեսակ քարոզները ապարդիւն ենք համարում: Եւրո-պայի քարոզներ անողները ամենից շատ ենթարկված են նախանձի և չար կրքերի ազդե-ցութեանը: Մեր միտքն այն է միայն որ ներկայ սերունդը աւե-լի բարոյական դարձնել անհնա-րին է, այդ պէտք է հասկանանք և աշխատենք ուսում և լուսաւո-

րութիւն տարածել, համոզված լինելով որ մենք թէև անպիտան ենք, բայց ապագայ սերունդը մեզանից լաւ կը լինի: Եւր, համոզված լինելով որ մենք ինք-ներս մեծ պահատութիւններ ու-նենք, մենք պէտք է ամեն ճիգ թափենք որ ապագայ սերունդը մեզանից բաղդաւոր լինի:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԾՈՒՇՈՒՅ

25 հոկտեմբերի

Երկու տարի է, որ ես հեռացալ Թաւրիզից, երկու տարի է, որ Թուրքի թաւրիզի Արամեան դպրոցը, որի մէջ ութ տարիէն աւելի մնալէն զինի, թող ներքի ինձ երկու խօսք այդ առթիւ ասելու:

Իր հիմնարկութիւնից յետոյ, բաւական տա-րիներ, մինչև 76 թիւը, այդ դպրոցը խաղաղք է եղել միմիայն մի քանի տղէս միջնակների ձեռքում, որոնց զբաղմունքը եղել է սովորա-ցնել խեղճ մանուկներին սաղմոս, աւետարան և Չամէան կամ Սալանթեան քերականութիւն, թուրքական պէս սերտել աղաւթ: Միայն յիշեալ թեւականից սկսած, սրբազան Աղբիւսեան եպիսկո-պոսը աջակցութեամբ մի քանի պօսիցի և դարադպրոցի օտարականների, յաջողեցաւ այդ ուսումնարանը առժամանակ զնել կանոնաւոր բարեկարգութեան մէջ, և մենք ունեցանք Սե-վը-Յակոբեանի, Գիւլշատեանցի, Մուշեղեանցի և Խիզանեանցի նման ուսումնական ասպարի-զում գործող մի քանի անձնաւորութիւններ, ընտրվեցան հոգաբարձուք, հիմնվեցաւ և ազգա-յին ընթերցարանը: Գլխաւոր մի քանի ամիս-ների ընթացքում ցոյց տուեց անսպասելի աւա-ջալիմութիւն: Անցան ամիսներ, տարիներ, յան-կարճ պատահում է մի անագին աղմուկ մեր ու-սումնական վարչութեան մէջ. տեղացի մի քանի խաներ կամ ազաներ ցանկանում են իրենք դառ-նալ հոգաբարձուներ, քիչու մենք ընդի թափ-րիզցիներ լինելուց յետոյ, ստամբուլցիք կամ դարադպրոցը կը լինեն մեր հոգաբարձուներ, այդ մի նամուս չէ. կամ մենք պիտի լինենք, կամ հոգաբարձութիւն բոլորովին չը պիտի լինի: Հա-կառականութիւնները շարունակվում են, այնպէս որ հոգաբարձութիւնը քանդվում է, և վերջա-պէս բանը այնտեղ է հասնում, որ թաւրիզցիք իրենց անտեղի վարմունքով և անձնական կրքե-րով համարեա զղուսացնում են ուսումնարանի առաջադիմութեան անխնայ աշխատող թէ ու-սուցիչներին, թէ մի քանի անհատներ և թէ հոգաբարձուներին, և այդպիսի մի խառն ան-կարգութեան միջոցում ուսումնարանը գրկվում է իր գիտնական և աշխույժ գործիչներից շատե-րէն, որից յետոյ ուսումնարանը կրկին սկսում է ընթանալ կաղիկաղ, հոգաբարձի մէջ թաւրի-զցիներ մի և նոյն է գիտնական թէ տղէս, թաք նրա հոգաբարձուն, նրա ընթերցարանի կառա-վարիչը լինի միայն անունով մեծ, իսկ հոգով և բարոյականութեամբ ամենաստոր մի անձնաւո-րութիւն:...

Թաւրիզի Արամեան ազգային դպրոցը որ համարեա առաջինն է պարսկահայերի մէջ, միշտ խաղաղք է եղել երկու հակառակ կուսակցու-թիւններին—դարադպրոցիների և թաւրիզցիների մէջ, որոնց միմեանց դէմ ունեցած վատ հակում-ներին զոհ է եղել այդ ողորմելի հիմնարկու-թիւնը: Եւ ահա, այդպիսի հակառակ կուսակ-

ցութիւններից բաղկացած հոգաբարձութիւնը, ոչ թէ միայն բարոյապէս և նիւթականապէս օ-գուտ չէ տվել ուսումնարանին, այլ և մեծ վը-նասներ է հասցրել դպրոցին. մէկի ծրագրից միւսը քանդել է, մէկի աշխատածը միւսը ոչ-չացրել է: Ահա Թաւրիզի հոգաբարձութեան գործունէութեան ուղղութիւնը: Այդ է պատճա-ռը, որ ուսանող սերունդը, ժողովրդի այդ թաւր ոյժը, զուրկ մնալով դաստիարակութիւնից, և ոչ մի աշխույժ անգամ չէ ունենում դէպի գի-տութիւնը. նորա մէջ մեռնում է կրթութեան եռանդը: Բացի այդ, շատ անգամ նա զոհ է դառնում տղէս հօր կամքին, որը նրան ստի-պում է մանկ մի գործի մէջ, սովորել մի որ և իցէ արհեստ, որով կարողանայ կեանքի աս-պարիզում իր օրական ապրուստը հայթայթելու միջոց ունենալ: Եւ օգնիչ գաղափար չունի ու-սման կամ կրթութեան վրա. տերտէր կամ վար-դապետ հօ չեն լինելու, ասում է որդուն:—Այդ է թաւրիզցիք կարծիքը ուսման անհրաժեշտու-թեան մասին, և այդ է պատճառը, որ պարսկա-հայը այսօր էլ նոյն խոր քնի մէջն է, ինչ որ էր մի քանի դար սրանից առաջ:

Ինչպէս լսում ենք, վերջին տարւած թիֆ-լիսից և մի քանի այլ տեղերից հրաւիրված ու-սուցիչներ կրկին ստուին իրանց հրաժարականը: Երկրայումս միակ նշույն այդ դպրոցի մնացին մի քանիսի հետ հայր Մ. Գալապեանցը, որին կարելի է բացառութիւն համարել մեր տղէս հո-գեւորականութեան մէջ: Իսկ այսօր այդ արժա-նաւոր անձնաւորութեան վրա թաւրիզի Արա-մեան դպրոցի ապերախտ աշակերտներից մէկը, որի անունն անգամ յիշելու նորմալը ենք զգում, իր անիրաւ դրապարտութիւններով նրա ազգագուտ գործունէութեան վրա մուր քակու-չէ դադարում: Մենք լաւ ծանօթ ենք Գէորգ Շահնազարեանցի հետ, մենք նրա նամակը ուրիշ ոչինչ չենք համարում, եթէ ոչ անձնական կրքե-րով լի և հիւանդ ուղեղի մի արտայայտութիւն, և չենք էլ կասկածում, որ այդպիսի մի համարվը միայն իր սե հարստութեան ընթերցարանի զանազան պաշտօնը տառնալու յաջողում է:

Օրիորդական դպրոցը մինչև այսօր դեռ կանո-նաւորապէս չէ ունեցել Պարսկահայը. բայց եթէ նորերումս մի օրիորդական ուսումնարան բանալ թաւրիզում յաջողվեցաւ, նա էլ երկիւղ կայ, որ չուտով զոհ կը դառնայ անմիաբանութեան: Թաւրիզում այդպիսի հիմնարկութիւնները եր-կար չեն գիտնում: Եւ անձամբ լսել եմ, թէ ինչպէս տեղացի ազաններից մէկը պնդում էր.

—Իդ ինչ մօզա է, ո՞վ է տեսել, որ այլժիլը կարդայ, միթէ յամօթ չէ. հօ նշանածի վրա գիր չէ գրելու, նրան հարկաւոր է տանը նստել և կար—բան սովորել: Բնականաւ կեանքը թաւրիզի հայերի մէջ, իրական սեռի վերաբը-րութեամբ, դեռ ես կրում է հասապետական հին, փակ ձեւերը:

Երանի թէ թաւրիզի հայերը, մանաւանդ երի-տասարդական թաւր տարը, հասկանալին իրանց դպրոցների ցաւալի դրութիւնը, որոնք խաւարի մէջ խարխալելով, գիմում են դէպի կորստեան անդունդը: Երանի թէ նրանք թողնելն իրանց նախանձը և ատելութեան ոգին, որը զրկեց իրանց բաղմաթիւ անձնաւոր աշխատողներից, և պատճառ դարձաւ դպրոցների անկեանք: Ար յուսանք, որ պարսկահայն էլ վերջապէս կարթ-նանայ իր դարերը քնից, կաշխատէ դարդանալ և ապահովել պարսկահայերի ներկան և ապագան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են որ Արդուինի հայ-կաթօ-լիկները եպիսկոպոսը հասել է Թիֆլիս: Պատում են, որ Եւրոպայի դպրոցի տեսու-պ. Արշակ Նահապետեան, հրաժարել է դպրոցի աշակերտներին, որ ոչինչ յարաբերութեան չու-

նենան և չը խօսեն զպրոցից դուրս եկած աշակերտներին հետ: Գոնէ այժմ հաստատ կարելի է ասել, որ Ներսիսեան զպրոցի աշակերտներին այլ ևս չի արգելիլ հայոց թատրոն յաճախելու, որովհետև իշխան Ամատունի հոգաբարձու է ընտրուիլ: Բայց և բոլորիանոց տեղերը թատրոնում կարող են միշտ բռնված լինել զպրոցի աշակերտներով:

ՆՈՒՆԻՍ Թեմական վերատեսուչ Յ. Տէր-Գրիգորեան խնդրում է մեզ տպել հետևեալը: «Նույն հայոց հոգեւոր զպրոցում հարկաւոր է մի ուսուցիչ հայոց և ուսուցիչ լեզուների և թուրքերէնի համար: Առնենայ շարաթական 24—30 դաս, ուսմիկը 600 թուրք տարեկան, ծառայ, բնակարան և վաւերիք: Գպրոցի ուսման ընթացքը տարրական է: Յանկարգիները թող իրանց պայմանները յայտնեն շուտով Նույնի, Յ. Տէր-Գրիգորեանցին, կամ հոգաբարձութեանը:»

Շատ տեղերից, ինչպէս օրինակ Արդուինից, Բաթումից, նոյն իսկ Ս. Պետերբուրգից մեզ գտնաւորում են որ Աշակը կանոնաւոր կերպով չէ համուում մեր բաժնւորդներին, մինչև անգամ մեր լրագրի մի քանի համայնները չեն համուում իրանց նշանակված տեղը: Մենք պարտաւորութիւն ենք համարում յայտնել, որ մեր լրագրի համարները ճշտութեամբ են ուղարկվում խմբագրատանից, բայց թէ փոստի մէջ անխնայութիւն է լինում, դրա մասին մենք երաշխաւոր լինել չենք կարող:

Մեզ գրում են ՆՈՒՆԻՍ: «Անցեալ տարի վարդապետի մօտ սպանված Բեմանովի դործը քննվեցաւ նորեւիտ մի լիցիւթայտագրի նախագահական գաղտնաւորում: Մեղադրված էին սպանութեան մէջ մի քանի անձինք և նրանց թուում մի հայ, Ալեքսանդր Մելիքով: Գաղտնաւոր դատարանի որոշումը գործի քննութեան ժամանակ չափող-վերջի-ՅՈՒՄ լեզվին յանկարծ խոտովանվում է որ ինքն է Բեմանովի սպանողը, որ մեղադրվածները, որոնց թուում և Մելիքովը, բոլորն էլ անմեղ են, իսկ վրանները սուտ վրաններ են: Գաղտնաւոր այդ խոտովանութեան հիման վրա արդարացում է բոլոր մեղադրվածներին, չափող-վերջի-ՅՈՒՄին դատաւարում է 10 տարվայ տաժանակիր աշխատանքներին, իսկ ծերունի Ալեքսանդր Մելիքովի համար, յայտնի չէ թէ ինչ պատճառով բացառութիւն է անում և նրան էլ դատաւարում է 12 տարվայ տաժանակիր աշխատանքներին: Գործը անց է կացրած այժմ Թիֆլիսի դատաւարական պալատը: Մելիքովը բանտարկված է: Իր բանտարկութեան ժամանակ նրա հետ միասին բանտարկված լեզվի Սամաթ-Արդուի Սալի-ՅՈՒՄ յանկարծակի մեռնում է, իսկ ինքն Մելիքովը գանգատ է տալիս դատարանին թէ ինքն անձամբ ենթարկվեցաւ բանտի մէջ, յայտնի չէ ում ձեռքով, թուրքաւորութեան փորձին: Մելիքովի գանգատը յանձնված է արդէն պ. Ֆեո-դորով քննիչի քննութեանը: Գանգատ տուող կարծիք է յայտնում, որ իր մէջ խառն է եղել կապուտ թիւ (անիլինայա կիսուտ) ասված թոյնը: Լեզվի Սամաթ վկայի յանկարծակի մեռնելը բանտի մէջ վերաբերում են նոյնպէս թուրքաւորութեան: Յուսմանք որ արդարագաղտնութիւնը կը գտնի մեղաւոր ձեռքը և կը բացատրի հաւատարմական կարծիքին այդ գաղտնիքը:»

ՄԵՐՈՒՆ ՏԵՄՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՒՄ

Ինչպէս կը սպասէինք, երէկուան թըղթաբերով առնուած Անգլիական լրագիրը հետեւեալ կարեւոր տեղեկութիւնները կը պարունակեն Բրիտանական ապստամբութեան նկատմամբ:

«Թէհրան, 2 նոյեմբ.—Բուրք Շէյխ Սա-տըգ, որ մասնակից էր Արմիոյ պաշարման, կը նահանջէ դէպի հարաւային արեւելեան կողմ: 3,000 Պարսիկ զօրք արեւմտեան սահմանադիրն մօտը Բրիտանական զինուոր վրայ կարշաւեն: Բրիտանական զօրքերը, որոնք կը հրամայեն Համգա Աղան և Ապտալ-Գաւորը, Պինափի մօտ Պարսից վրայ երկիցս յարձակել և երկու անգամուն ալ

յետս մղուելէ յետոյ, այժմ դէպի հարաւային արեւմտեան կողմը կը նահանջեն: Պինափի բանակատեղւոյն վրայ յարձակումն հոկտ. 31-ին տեղի ունեցաւ, և Պարսիկ զօրքն որ անդ կը գտնուէր, այժմ Միսո-տափի վրայ կը քալէ: Այն դիրքն ևս Բրի-դաց ձեռքէն ազատելու համար: Թէհրանէն զրկուած զօրքերն, որ ի Պինափ յապա-ղած էին զինուորական պիտոյից անբաւա-կանութեան պատճառաւ, այսօր յառաջ երթալու հրամանն ստացան:

«Թէհրան, 3 նոյեմ.—Նոյեմ. 1 թուով Պինափէն եկած հեռագրաց նայելով, Բուրք հրամանատար Ապտալ-Գաւորը 3,000 հե-ծելագորաց և 2,000 հետեւակաւորաց հետ Թէհրանէն գետին անդին քաշուած է: Նո-ւբէն 7 վաշտ հետեւակաւոր և 1,000 հե-ծելագորք այսօր Թէհրանէն ճանապ կան Բրիտանական արշաւանայ վայրերն երթալու համար: Բուրք Շէյխ Ուպէյտալիս կը շարունակէ զենք և ուղեւորութիւնը զրկել իւր բանակակիցներէն, որ է ի Նահրիթմահ-Բայց Բուրք գլխոյ միջև անհամաձայնու-թիւնը կը տիրեն, և Համգա աղան յանձն չառաւ Գաւրէթի վրայ քալել:

«Թէհրան, 5 նոյեմ.—Շէյխ Սատըգի ա-ռաջնորդութեան ներքեւ գտնուող Բրիտա-կան զուգ մը նոյեմբեր 3-ին Որմիայէն քանի մը մղոն հեռի Պարսիկ զօրքն յաղ-թութեամբ, և յետոյ լեռները քաշուեցաւ: Թէհրանէն զրկուած զօրքերն այսօր Թե-գանթէիէ կը հասնին Պաշտանապէս կը ծանուցուի թէ Ապտալ-Գաւոր Պարսիկ Բուրքերէն բաժնուել է, և ապստամբ Բրի-դաց հրամանատարութեան մասին միեւն թողիք է Համգա Աղան: Արմիոյ Անգլ. ընդհանուր հիւպատոս Պ. Ապօթ Գաւրէթ հասաւ:

«Թէհրան, 5 նոյեմ.—Թէհրանէն եկած տեղեկութեանց նայելով, Պարսիկական ե-րեք զօրքերէն Բրիդաց վրայ յարձակել են, և երկուքը Բրիդաց յաղթելով, զանոնք ստիպել են Որմիոյ և Սալմա-Պալաքի կողմը նահանջել: Պարսիկաց երկրորդ զօրքաւորման, որ Աճմէտ իշխանին հրամանատարութեան ներքեւ կը գտնուի, միւս երկու զօրքերէն հետ միասնաւոր համար յառաջ քաշած լի-նելով, (Թէհրանի մէջ) կը կարծուի թէ Բուրքը ամեն կողմէ պիտի պաշարուին, և չը պիտի կրնան փախչիլ:»

Վերջերայ հեռագրերէն կը տեսնուի թէ Համգա Աղային սպանման և Շէյխ Ու-պէյտալիսի որդի Ապտալ-Գաւորի գերեւ վարութեան լուրը, զոր Ալիթէր հրամա-նաւոր էր, անհիշէ, Բրիտանական պար-տութեան զրոյցներն ալ այսպէս մանրա-մասնօրէն կը ստուգուին: Բայց ինչպէս կը ակնհայտ, ցարդ անդի չէ ունեցած վճառ-կան ճակատամարտ մը, որ Շէյխ Ուպէյտ-ալիսի և ընկերաց զօրութիւնն զգալի կերպիւ տկարացնէր:

Մինչ ասոնք Պարսիկական հողուն վրայ տեղի կունենան, կրեւի թէ Սամանեան իշ-խանութիւնը պարսպ չեն կենար: Կարինէն մեզ զրկուած ընդարձակ նամակ մը, զոր վաղը (շաբաթ) կը հրատարակեմք, կարե-ւոր տեղեկութիւններ կը պարունակէ այս նկատմամբ: Վիմանմք թէ, վասն հրա-մատար Սամահ վաշային դիտողութեանց վրայ, որ կը գտնուէր թէ Բրիտանական ապստամբութեան դէմ պէտք եղած զու-րական միջոցները ձեռք առնու համար բոտ բաւականին ոչ զօրք ունի և ոչ զը-րամ, Կարինէն, Բրիտանական, Բարբերդէն և Տիարպէրիէն բազում զօրք ճանապ կեր են դէպ ի վան երթալու համար, ուր 30 վաշտ Սամանեան զօրաց բանակ մը պիտի համախառն եղեր: Պէտք եղած դրամն ալ

հաւաքուելու վրայ է եղել: Եր յուսամք որ բոլոր այս տնօրէնութիւնը ի դէպ ժամու պիտի գործադրուին, որպէս զի ապստամբ և պարտեալ Բրիդաց Սամանեան հողը մըտ-նելը կարենայ արգելուիլ:

Վհհ. Սուլթանն Սամանիէի երկրորդ պատուանշանը շնորհեց հեռագրաց և թըղթա-թատարութեանց վերատեսուչ իզգէթ է-ֆէնտիին:

Վաղթ իւր այս առաւտեան թուով կը ծանուցանէ թէ Տուլէինիոյ խնդրոյն համար երկու կողմէն նշանակեալ պատու-րակներն Շքօտրայի մէջ բանակցութեան սկսել են:

Երէկուրէն սկսեալ, տէրութեան բոլոր պաշտօնատարաց ամանական մը կը վճարուի: Վաղթ իւր այս առաւտ թուով կը հաստատէ թղթատարական բարենորոգման լուրը՝ զոր քանի մ'օր առաջ Սլման պուլ հրատարակած էր նուազ բացայայտ կերպիւ: Վաղթ կը ծանուցանէ թէ Պե-տական խորհրդոյ առջև քննուած նոր կանոնագրոյն համեմատ՝ ցամաքով տէրու-թեան երկիրներուն ամեն կողմը զրկուած նամակներէն և այլ գրութիւններէն ընդ-հանուր կերպիւ երկրորդ դրուշ պիտի առնուին: Միւս ծանրով ծովեզերեայ քա-ղաքները զրկուածներէն քառասունական փարա: Այսինքն թէ, հեռաւորութեան համեմատ թղթատարական ծախքը չը պի-տի աւելանայ: Եր յուսամք որ այս լուրն ի մօտոյ պաշտօնապէս կը ստուգուի, զի յայնժամ տարակից չը կայ թի Սըր Ռո-ւանտ շիւի թղթատարական փոփոխու-թեան բարեկերպ, զորս եւրօպացիք շա-տոնց կը վայելեն, մեր երկրին բնակիչներն ալ վայելելու կարող պիտի լինին:

(Մ ա լ ի ս)

ՖՐԱՆՍԻԱ

Ղրագիրներ մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները:

Ֆրանսիական սենատի նոյեմբերի 16-ի նիստի ժամանակ օրինական շենեկուն մե-ղադրում էր Ֆրանսիական կառավարու-թեանը երգմագիւցութեան մէջ պապի վերաբերութեամբ և կառավարութեան քա-ղաքականութիւնը Ֆրանսիայի համար կորս-տաբեր տնտեսեց: Սենատի ձախակողմեան կուսակցութեան անդամ Իբուլէ Նոյնպէս յարձակվում էր միսիստութեան բռնած ընթացքի վրա և պնդում էր, որ կաթոլիկ միաբանութիւնները օրինաւոր կերպով ընդ-դիմադրեցին կառավարութեանը և որ նը-րանց վարմունքը անկարգութիւն չէ կարե-լի համարել: Միսիստութեան ֆրանսիական պատասխանելով սենատի այդ անդամներին, յայտնեց, թէ կառավարութիւնը պէտք է հսկէ, որ եկող տը սերունդը այնպէս կըթվի, որ յարգէ օրէնքները և այժ-մեան հիմնարկութիւնները: Բիւֆէ պահան-ջեց, որ սենատը իր անբաւականութիւնը յայտնի կառավարութեանը, բայց որով-հետեւ մեծամասնութիւնը վճռեց անցնել հասարակ օրակարգի գործերին, ուրեմն մարտի հրամանների մասին վիճաբանու-թիւնները վերջացրած կարելի է համարել: Փարիզի կոնսերվատորիայի մասին լրա-գիրներին գրում են հետեւեալը: Կոնսեր-վատորիայի մէջ ընդունում են 22 տարե-կանից ոչ մեծ իւրաքանչիւր երիտասարդի, եթէ նա կը կարողանայ երաժշտութեան տէրօրայի քննութիւնը տալ: Երգեցողու-թեան պրօֆեսորները ընդամենը ութ են և իւրաքանչիւրը նրանցից 15 երկուս ա-

շակերտներ ունի: Կոնսերվատորիայի մէջ աւարտողները այնքան վատ են լինում պատրաստված, որ անկարող են իսկոյն գործ սկսել: Երգիչներից նրանք, որոնք կարող են մանկ օր և է խմբի մէջ, առաջ պէտք է թոյլատուել ինչպէս „Grand Opera“ և „Opera Comique“-ի դերեկ-տորներին: Այդ թատրոնների դերեկտորները իրաւունք ունեն երգել տալ իրանց բեմի վրա երկու տարի շարունակ կոնսերվատու-րիան աւարտող իւրաքանչիւր երիտասար-դի:

Ինչպէս միւս քաղաքները, նոյնպէս էլ Փարիզը լաւ երգիչների պակասութիւն է զգում: Կոնսերվատորիան չէ լրացնում այդ պակասութիւնը: Փարիզի ամենալաւ երգիչ-ները օտարազգիներ են:

ՆԵՐՈՒՄ

„Новое Время“ լրագրի մէջ տպված է հետեւեալ թղթակցութիւնը Լոնդոնից:

Գուրլինի մէջ հրատարակվող լրագրիւն-րից մէկը ստորագրութիւն բաց արեց Պար-նիլի և նրա ընկերների գաղտնաւորական գործի ծախսերը հոգալու համար: Այդ ստորագրութիւնը մի օրվայ մէջ 168 ֆունտ ստերլինգ տուեց: Ուրեմն թէպէտ Սնգլիայի մէջ գաղտնաւորական գործաւարութիւնը չափազանց թանգ է նստում, այնու ամե-նայնիւ թէ Պարնիլ և թէ կառուածական միութեան միւս անդամները զրամական պակասութիւն չեն ունենայ: Մի մեծ մի-տինգի ժամանակ Պարնիլ յայտնեց, որ կա-ռավարութիւնը մտադիր է որքան կարելի է յետաձգել իրանդական կառուածական միութեան անդամների գաղտնաւորական գործը: Եթէ այդ լուրը ճիշդ է, ուրեմն կառավարութիւնը, Պարնիլի կարծիքով, կամենում է, որ թէ ինքը և թէ իրանդա-կան միւս ներկայացուցիչները պարլամենտի մէջ չը մասնակցեն պարլամենտի աշխա-տանքներին, երբ չը սկսվի իրանդական կա-ռուածական վերանորոգութիւնների հարցը քննվել:

Պարնիլ գաղտնաւորական հրաւերը ստա-ցաւ ամերիկական „New-York-Herald“ լրա-գրի թղթակցի ներկայութեամբ: Երբ այդ գործի մասին նրանց մէջ խօսակցութիւն բացվեցաւ, Պարնիլ մեկնեց, թէ մեղադրական գործը բաղկացած է 19 կետերից, որոնց նպատակն է փաստել իրանդական ցոյցին աշխարհի առաջ, որին իրանդական աղ-գաբանութեան իսկական դուրսիւնը յայ-տնի չէ: Մեղադրական գործը կարելի էր ծիծաղելի համարել, եթէ նա չար նպա-տակ չունենար: Այդ գործը ցոյց է տալիս, որ անգլիական ոչ մի կառավարութիւն չէ կարող ազնուաբար և բարեխղճաբար վե-րաբերվել իրանդական նշանաւոր հարցե-րին: Անգլիական կառավարութիւնը ձգտում է ցոյց տալ, որ նա կառավարում է Երբան-դիան սահմանադրական սկզբունքներով: Սահմանադրական կառավարութիւնը այն-ժամանակ է լինում, երբ կառավարութիւնը կառավարվածների համաձայնութեամբ է կատարվում, երբ կառավարութեան անդամ-ները վարում են իրանց պաշտօնները այն պատճառով, որ նրանք ներկայացնում են ժողովուրդի մեծամասնութեան ցանկու-թիւնները և ձգտումները: Երբանդիան եր-բէք չէ կառավարվել ազգաբնակչութեան ցանկութեան համեմատ: Պարնիլ զանգա-տում էր, որ անգլիական մամուլը շարու-նակ փառ մեկնութիւն է տալիս Երբանդի-յի մէջ պատահած բոլոր գործերին: Եր-

Հաճերին Այդ մեծ շարժմանը մասնակցելու պատճառով բռնությունը ոչնչացնելու համար, ժողովուրդը ազատելու համար Պարսկերը և նրա ընկերները այժմ հալածվում են անգլիական կառավարությունից, որ նրանց դատաստանի է նվաճարել: Անգլիան մի քանի ժամանակ առաջ իրլանդական ժողովուրդին ենթարկեց կալուածատէրերի իշխանութեանը և այժմ էլ իրլանդիան կամենում է զլուխ բարձրացնել, անգլիական ազատամիտ կառավարութիւնը չէ ամաչում մերկացնել հին, ժամգոտած զէնքը: Մի քանի տարի առաջ նոյն ազատամիտ կառավարութիւնը փոփոխեց հին օրէնքները և նորերը հրատարակեց, որոնք միջոց էին տալիս Անգլիայի գործաւորներին ժողովներ կազմել և ընդդիմանալ գործատէրերի բռնութիւններին, իսկ իրլանդացիներին վերաբերութեամբ նոյն կառավարութիւնը իր փոխած հին օրէնքներն է գործադրում: Մենք դիմում ենք քաղաքական ազատութեան բարեկամներին, խնդրելով, մի գումար կազմել մեր գործը առաջ տանելու համար, ուովհետեւ մենք դրամական միջոցներ չունենք, իսկ կառավարութիւնը պետական դանձարաններ ունի:՝

ԴԱՄԱՍԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՏ

Քէհրան, 24 հոկտ.

Կալթիբէկ մինչև Քէհրան կարավանի ընթացքը լաւ եղանակներին տեսւմ է 20 օր: Համապարհները մինչև Զինման խիտ գոտեարեւն, անկանոն և բոլորովին բնութեան կամբին են թողված: Իսկ այստեղից մինչև Կալթին և Քէհրան սակաւ բացառութեամբ, խիստ կանոնաւոր են: Կալթիբէկ և Զինմանի միջոցում կան երկու ամենաբարձր լեռանց կիրճեր, որոնց դապախները բարձրանալու համար, ուղեւորք՝ այլ և այլ ձևով անցնելով և ահաւելի հովիտներով զանազան պտղատուներ են գործում, նոյնպէս և ցածրանալիս: Սթանցից առաջինը կաշվում է Շիրքի, իսկ երկրորդը՝ Կափուրու: Այս վերջինիս մօտ է Միսյանի գիւղաքաղաքը, ուր Մ ա լ ա աստած մի ամենաշնորհալի միջոցով կայ, որի խայթուածը խիստ վտանգոտ է մահացու է: զրա առաջն առնելու համար ոչ մի բժշկական միջոց չէ օգնում: Միմիայն կաթնիզէնից, մեղքէնից և միջերից հանապազօրեալ պահանջողութեամբ փոքր մէջ միջոց կարող է յետաձգել թշուառ զոհերի մահուան օրերը: Օտարականք այդ միջասաներից չը գարնվելու համար, գիշերները կամ բացօթեայ տեղ պէտք է իջնանին, կամ թէ սենսակներում ամբողջ գիշեր ճրագը վառ պահելու են:՝ Նշանաւոր է Միսյանի 24 կամարով հուշակաւոր կամուրջը, որը շատ հին ժամանակներից շինված էրկերով, միւսերով տեղից քանդված է: Ունի աներբնաւան նման երկու գեղեցիկ սենսակներ, ուր իջնում են քարէ ամրոցւոյններով: Աննակների մի կողմն բաց լինելով, դեռևս վրա է տալում: Ներկայ վեհալիւս Շահը սրանից մի քանի տարի առաջ քանդված տեղերը նորոգել է առած եղբ, բայց հազիւ անցել է մի տարի, այդ նորոգված մասը կրկին քանդվել և բաժանվելով հնիցը, մի կողմ է ձևացրել գետի վրա: Արանից պարզ երևում է, թէ հինքը որքան հմուտ են եղել ճարտարապետութեան արհեստին: Ապֆրանքու տարի ստորոտում մեզ պատահեց և մի աւերակ, որը արևմտեան կողմից ունէր մի մեծ քարայէն և կամարածն գուռն, որի ճակատին մի ժամանակ եղել է արձանաբլուրիւն, բայց այժմ բլուրիկին անպարտապէս տեղ է միայն նըշանարւում: Մտնելով այդ գուռնից, օձապոյտ ճանապարհով բարձրացանք վերեւ: Բարձր մի աշտարակի վրա գտանք մի փոքր սենսակ, որի արեւմտեան կողմն բաց էր: Մենք ենթադրեցինք, որ սա բերդի պահպանանայ սենսակ պէտք է լինի, զի այստեղից երևում էին առաջը գտնված անդրաճակ դաշտերն ու տարբեր Շարունակեցինք անդրաճակ և գտանք մի մեծ հրապարակի նման տեղ, որը սրբապատված էր ամբողջ պարսկական

են բազմաթիւ եղբերակներ և անհամար վարդապետներ որոնք Ռաշտրի անտառներից են դալիս:

Այսօր՝ որ է 24 հոկտեմբերին, Թէհրանում կատարվեցաւ մի ամենախիտաւոր և արտաքայ կարգի չքել հանգէս: Այս հանգէսն էր թագաւորի տղկայ հարսանեաց հանդէսը: Կս հրաժարվում եմ այս հանդէսը մանրամասնաբար նկարագրելուց, միայն ընթերցողին մի փոքր գաղափար տալու համար կասեմ, որ այս աւուր հանդիսի համար ծախս է եղել միջին հաշուով 300,000 ռուբլ: Մինչդեռ Պարսկաստանի միւս քաղաքները մեծաւ մասամբ սովից կոտորվում են:

Թէհրանում մօտ 200 հայոց տուն կայ, որը այլ և այլ կողմերից են դաղթած: Սոցանից ոմանք տէրութեան գլխաւոր պաշտօնականներ ոմանք վաճառականք, միւս մի մասն նշանաւոր սկերիշներ, դերձակներ և այլ արհեստաւորներ: Մի տղայոց ուսումնարան կայ 40 աշակերտներով, որը բացված է Ուսումնարանից ընկերութեան ձեռամբ: Ուսումնարանը մի ժամանակ ունեցել է 350 թուման տարեկան եկամուտ, բայց այժմ, ինչ ինչ ցաւով պատճառներով այդ տղայաւոր աղբիւրը ցածաքել է: Ուսումնարանը այժմ կառավարվում է վահագաւ Հասի յառկացրած 200 թումանով: Հայ օրիորդք յաճախում են գաղղկացիների ուսումնարանը, գերդիկ կերպով խօսում են ֆրանսերէն լեզուն, բայց ցաւալի է, որ երկու տող հայերէն չեն կարողանում գրել: Կայ և մի ընթերցարան, ուր յաճախում են ի միջի այլոց, և հայ աւետարանական եղբայրներ: Աս առաջին քայլն է, որ անում են հայերը, և որը «Մշակ» քարոզչների արդիւնքն է, որ այսպիսի հեռաւոր տեղերում իսկ արձագանք է գտել: Ազգային ընկերութիւնք վերջին ժամանակներս ինչ ինչ պատճառով թուլայել և այժմս հոգեւարքի մէջ են: Եթէ միքանի բարեմիտ աղիցեութեան տէր անձինք աշխատեն, կարող են կենդանութիւն տալ ընկերութեանց: Թէհրանի պատուարման ազգայինք, չը նայած իրանց փոքրամասնութեան, բարեգործական ձեռնարկներից երբէք ետ չեն մնացել: Այս վերջին ժամանակներում աւելի քան 700 թուման են հաւաքել, որից 310 ուղարկված է վանայ սովից, իսկ մնացածը Ասպահանի կուսանաց մենաստանին:

Գ. Ս. Տ. Ազամանց

«ՄՇԱԿ» ՀՆՈՒՆԴԻՐՆԵՐ

Մ Ի Զ Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ն Է Ց

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 նոյեմբերին: „Новое Время“ լրագիրը լսել է որ տպագրական օրէնքները վերաքննող յանձնաժողովի վերջիւր նպաստաւոր է մամուլի ազատեւուն վարչական պատիժներից: Գործերի քննութիւնը, որոնք հետեանք կը լինեն տւպագրական խօսքի զեղծումների, դիտաւորութիւն կայ մասնաւորապէս յանձնել դատարաններին:

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 նոյեմբերին: Պետական բանկի 5% տոմսակր առաջին շքանի արժէ 95 ռ. 50 կ., երկրորդ 92 ռ. 37 կ., երրորդ 93 ռ. 25 կ., չորրորդ 92 ռ. 75., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակր արժէ 220 ռ. 25 կ., երկրորդ 214 ռ. 50 կ., արեւելեան առաջին 90 ռ. 62 կ., երկրորդ 90 ռ. 50 կ., երրորդ 90 ռ. 37 կ., ռսկի 8 ռ. 5 կ.: Ուսաց 1 ռուբլ 1 ռուբլի վրա արժէ 24,69 պէնս, ռուսաց 100 ռուբլ բերլինի վրա 209 մարկ 62 պֆ. փարիզի վրա 260 ֆրանկ:

Խմբագիր—հրատարակող Գ.ՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

НА 1881 ГОДЪ, НА СЛѢДУЮЩИХЪ УСЛОВІЯХЪ:

ՀԻՒՆԵՐԵՆՈՑ

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.